



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

30 JUL 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԿԱՆ

619.3

h-61

արք

ԻՆՉՊԵՍ ԲՈՒԺԵԼ ՎՈԶԽԱՐՆԵՐԻ
ՔՈՍ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Միութենական կոլտնտեսությունների հրամանգր)

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈԽՀ ԿՈԼՏՆՏԵՆՑԻՈՆԻ

ՏԵՐԵՎԱՆ

1931

26.04.2013

Հ Ր Ա Յ Ա Ն Գ

ԿԱԼՏԵՑԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՇԻԱՐՆԵՐԻ
ՔԱՆ ԳԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԲԺՇԿԵԼՈՒ
ՏԵԽՆԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԻՆՉԻՑ Ե ԱՌԱՋ ԳԱԼԻՍ ՔՈՍ ՀԻՎԱՆԴՈՒ-
ԹՅՈՒՆԸ.

ԹԵՇԻՐԱՆԻ ՑԱՊՐԱՆ
ԳԼԱՎԱՐԻ 6835 (Բ)
ՊԱՏԱՏՎԵՐ 6162
ՏԵՐԱԺ 1500

Վոչխարնեղի քոս հիվանդությունը առաջ է դալիս չափազանց փոքր մեծություն ունեցող, սովորական աչքով անտեսանելի մի տիղի միջոցով։ Քանի տիղի եղը մշտապես ապրելով վոչխարի կաշվի մեջ՝ բացում և նրա մեջ անցքեր, մնիում և բացառապես որդանիդմի հյութերով և զնում և 15-ից մինչեվ 24 հատ ձու, վորոնցից 4-7 որ հետո զուրու և դալիս ջահել տիղեր (արուներ և եղեր)։ Սրանք արագ (14-17 որից) հասունանալով, իրենց հերթին բեղմնավորվում են և լրնդունակ զառնում ձու զնելու։ Թէ վորքան արագ են զարգանում քոսի ախցերը, բույց են տալիս դիտնականների այն հաշվառմաները, վորոնց համաձայն, չի զույգ տիղեց (արու և եղ) 8 ամենօն ընթացքում ստացվում են մեկ ու եես միլիարդ տիղ։

3

15873 - 52

Թոսի աիզերն ապրելով վոչխարի կաշլի մեջ, առաջ են բերում ուժեղ քոր, վոչխարի մարմինը չարունակ քոր և գալիս, նա անհանդստանում է. ափոթքակով չի ուտում, նիհարում և վերջիվերջու ծայր աստիճան հյուծվելով՝ ստոկում է: Այդ քորն առանձնապես ուժեղանում ե տաք յեղանակին կամ տաք վոչխարանոցում և զիշերը, իսկ ընդհակառակը՝ սառը յեղանակին կամ խուզելուց հետո այդ քորը նվազում է: Թոսով բոնված տեղերից բուրգը թափում է, կաշին մերկանում է և այդ մերկացած տեղերում առաջ են գալիս կարմրավույն կամ ուեղնավուն բշտիկներ՝ լցված պղտոր թարախով. այդ բշտիկները պատովում են և քայքայված կաշլի հետ միասին կազմում են գորչ գեղնավուն ճարպոտ խոցեր և կեղեւներ, վորոնք պարունակում են տիգերք: Վոչխարի կաշին հաստանում է, դառնում է կոշոր ու չոր և ծածկվում է սպիներով ու ճեղքվածքներով:

Ամենից շատ տարածված, այսպես կոչված, վերնակաշվային քոսը լինում և վոչխարների մարմնի բրդով խիտ ծածկված մասերում, այն ե՝ պոչի արմատի, գավակի, մեջքի, թիկունքի և մարմնի կողքի մասերի վրա: Թոսի տիգերը շատ հետշ կերպով հիվանդ վոչխարից առողջներին են անցնում՝ շամքարի, մսուրների, տաշտերի, վոչխարներին խնամողների հագուստի, խուզելու ժամանակի մկրտառի, աբուտառեղիների, և ընդհանրատես այն

ամենի միջոցով, վորոնց քավել կամ շփվել են քոսով հիվանդ վոչխարները: Թոսն առանձնապես արագ և տարածվում ձմռանը, յերբ հիվանդ և առողջ վոչխարները միասին պահպան են խոնակ, խեղդուկ և նեղ փարախներում:

Քոսով հիվանդանում են գլխավորապես մերինոս և մետխո վոչխարները փոկ տեղական կոշտաբուրդ վոչխարները հաղվաղեալ են հիվանդունում:

Ի՞՞ՆՉՈՒՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԲՈՒԺԵԼ ԳՈՍԱԽՏԸ.

Վոչխարների քոս հիվանդությունը միանդամայն հեշտ և բուժել և այդ կարող և անել ամեն մի կոլտնտօսական՝ անասնաբուժի կամ անամնաբուժակի զեկավարությամբ, միայն պահանջվում է, վոր բուժողը լինի շատ զգույշ և ամենայն խնամքով պահպանի անասնաբուժական-սանիտարական անհրաժեշտ կանոնները: Վոչխարների քոսը կարելի յե բժշկել կամ կաշլի մեջ բուժական հեղուկ ոժանելիքներ ներսը կերպով (չփելու միջոցով) կամ նրանց հակաքոսային լուծույթներում լողացնելով կամ հատուկ դաշտանայակներում նրանց վրա ծծմբային գաղ ծիելով:

Զմռնաց, յերբ վոչխարներին լողացնել չի կարելի, վորովհետեւ նրանք շատ չուտ մրտում են, կամ յերբ կոլտնտսությունն ունի վոչ ամելի քան 100-150 գլուխ վոչխար, քոսի բուժումը կատարվում և հետեւյալ կերպ. յուրաքանչյուր վոչխար

ուշագրությամբ նայվում ե և յեթե նրա կազմի
վրա հայտաբերվում են քոսով՝ վարակված տե-
ղեր, այդ վարակված մասը խնամքով լիցացվում է
(ժեռքով) կանաչ սասպնի կամ խոտի մոխրից պատ-
րաստած մոխրաջրի տաք լուծույթով՝ այնքան,
մինչև վոր բոլորովին վերանան խոցերը, ապա
բացված մասուղ, նուրբ և թեթեք կերպով արյու-
նահոսող կաչվի մեջ խողանակի կամ մաշալկայի
ողնությամբ՝ ուժեղ կերպով արորելով՝ մտցնում
են հետեւյալ բաղադրությունն ունեցող հեղուկ ո-
ժանելիքը՝

1 մաս կրեոլին

1 » սկիսիդար

2 » մաքուր ձյութ (կուպր)

1 » նավթ

10 » ոլեոնաֆո կամ վարնին և կամ վո-
րեկ բուսական յուղ:

Իսկ յիթե նման ոժանիկք պատրաստելու հր-
նարավորություն չկա, այլ դեպքում կարելի յե-
րվածած հիւանդ տեղերը չփել ու մտցնել կրեո-
լինի 5 տոկոս լուծույթ կամ սկիսիդար. Հեղուկ
ոժանիկքով արորել կամ կրեոլին (կամ սկիսի-
դար) պետք ե մտցնել վոչ միայն վարակված տե-
ղերը այլև նրան շրջապատող առողջ կաշին մո-
տավորապես ձեռքի ամի լայնությամբ, քանի վոր
այցը մասն են վարակված և լինում քոսի տիպերով:
Վոչ ուշ, քանի 8-10 որ հետո կաչվի լվանալը, դի-

զրդ տրոբելն անողայժման պետք է կրկնել, քանի
վոր այ դժամ սմակամի լիցոցում ձմիկներից դուրս են
գալիս դեռ չսպանված ջահել տիպեր:

Բուժումը շարունակվում է (8-10 որվա ընդ-
միջումներով), այնքան ժամանակ, մինչեւ վոր
վոչխարները բոլորովին կառողջանան, այսինքն
յերբ նրանց քորը կրադարի և ուշադրությամբ
նայելիս, նրանց կաչվի վրա այլևս բատիկներ, թա-
րախալից խոցեր, կաչվի քերպածքներ չեն նկատ-
վել:

Հիվանդ վոչխարների բուժման հետ միաժամա-
նակ անհրաժեշտ ե խնամքով ախտահանել չեն-
քը և այն բոլոր առարկաները, վորոնց շրփ-
վել են հիվանդ վոչխարները: Այդ կատարվում
ե հետեւյալ կերպ. այն վարախում, ուր պահ-
վում են հիվանդ վոչխարները, գոճաղրի վերին
շերտը 18-20 սանտիմետր հասառությամբ տար-
վում և դաշտ և հողի տակ արվում, կամ թե չե-
փարախի հետու տեղում (ցանկապատած տե-
ղում, վորպեսով առողջ վոչխարները այնտեղ
մտնել չկարողանան) կույտեր են անում, վո-
րից հետո պատրաստում են աթար. (վառելիք):
Դոժաղրի վրա փոշած ծղոտե ցամքարը
պարտադիր կերպով պետք ե այրվի. փարախի
պատերը, ինչպես և տախտակյա միջապատերը 2
մետր բարձրությամբ խնամքով պետք ե սրսկել
կրտկաթուվ, վորը պատրաստվում և հետեւյալ

կերպ մեկ գույքը կրակաթ ստանալու համար վերց-
վում և յերկու ու կես կիրոգրամ չհանդցրած կիր
(վորովհետեւ վաղուց հանդած, վոշիանման կիրը
օռոի տիզերին չի վոչնչացնում) և լցվում և փայ-
տյա ամանի մեջ (մի խորը տաշա կամ ընդարձակ
տակառ)։ այնուհետեւ կրի վրա լցվում և մի փոքր
ջուր և գանդալորեն խառնվում, այդ ժամանակ
պետք և զգույշ լինել, վորպեսդի շիթերից չցատ-
կեն աչքի մեջ։

Կրի կտորները ուժեղ կերպով տաքանում են,
սուաջանում և գոլորշի և կիրը վեր և ածվում սպի-
տակ չոր վոշու։ Կիրը հանդցնելուց հետո անհրա-
ժեշտ է շարունակ խառնելով, հետզհետեւ ջուր ափե-
լացնել այն հաշլով, վոր վերցված յուրաքանչյուր
2 ու կես կիրոգրամ չհանդցրած կրից ստացվի մեկ
դույլ (12 լիսր) կրային սպիտակ լուծույթ, լուրը
կոչվում է կրակաթ։ Այդ կրակաթը դործաղրվելու
յի հենց նույն պատրաստված որը, քանի վոր
նույնիսկ մեկ որ հետո նա արդեն կորցրած և լի-
նում քոսի տիզերն ու միկրոբները վոչնչացնու-
հատկությունը, այդ պատճառով ամեն անդամ
պետք և հանդցնել այնքան կիր, վորքան պահանջ-
վում է կրակաթ մեկ որվա համար։

Փարախի պատերը սրսկելու և ընդհանրապես
չենքերի ախտահանման համար կարելի յե դոր-
ծաղրել նաև քլորակիր, վորը դործադրվում և կամ
թանձր (մեկ մաս քլորակիրն 3 մաս ջուր) և կամ

իբրեւ քլորակրակաթ (1 մաս քլորակիրին՝ 30 մաս
ջուր)։ Քլորակիրի, ինչպես նաև նրանից ստացված
լուծույթի հետ վործ ունենալու ժամանակ ան-
հրաժեշտ է հատուկ ուշադրություն, քանի վոր
նրանից բարձրացող գալոր (քլորը) չառ վտանգա-
վոր և ինչպես մարդկանց, այնպես և կենդանիների
թոքերի համար։

Քլորակրային լուծույթները պետք ե պատ-
րաստել բաց ողում և աշխատել վորքան կարելի յե
այդ գաղցի (քլորից) վեհ ներս չնչել։ Ենքը քլո-
րային կրով ախտահանմելուց հետո անպայման
պետք ե բանալ դոները, լուսամուտները և ջթող-
նել անաստները ներս մտնեն այնքան ժամանակ,
մինչեւ վոր քրորի հասը բոլորութին անցնի։ Քլո-
րային կիրը պետք ե պահել միայն չոր, դով և
անբնակ տեղ, քանի վոր խոնալ և տաք տեղում
քլորային կիրը քայլայվում է, արձակելով թու-
նավոր գաղ (քլոր)։ Այն ամենը (տակառ, արկղ և
այլն), վորի մեջ պահվում և քլորային կիրը,
չպետք ե ամուր փակել, քանի վոր քլորի գաղի
կուտակումից կարող ե պայթուն առաջանալ։
Պայթունից խուսափելու համար, վոչ մի դեպ-
քում քլորային կիրը չպետք ե խառնել ծծմբի նա-
շառերի, նավթի, բենզինի և այսպես կոչված ե-
ֆիրայն յուղերի հետ (անանուխի, մանանեխի
յուղի և այլն)։

Բացի վեցուհիցաւ յեղանակով չենքն ախտա-

Համելուց, անհրաժեշտ է տաշտերը, մոռուները և
բոլոր տախտակյա մասր մասերը և կահավորումը
խնամքով լվանալ (փայտե կամ խոտի մոխրից
պատրաստված) մոխրաջրի տաք և բարկ լուծույ-
թով (առանձնատպես հանձնարարելի յե հնդկացո-
րենի ծղոտից պատրաստված մոխրաջուրը): Յե-
զանի և բահի յերկաթյա մասերը, վորոնք չփակել
են վարակված կերի կամ ցամքարի հետ, ավելի
լավ ե այրել կրակի վրա, իսկ փայտյա կոթերին
քանի կամ նույն կրային կաթից կամ քլորային կը
լուծույթ: Քանի վոր հիմանդ վոչխարներին խնա-
մոզների հագուստի վրա կարսող են մնացած լինել
քուի տիգեր, ուստի անհրաժեշտ ե նրանց ամբողջ
վերնազեխտը լվանալ կրային կաթով և կամ խը-
նամքով տաք թոնրի մեջ թափ տալ կամ վառա-
րանի մեջ պահել:

Հիմնականում վերոհիշյալ կանոնները ճշ-
տությամբ պահպանելու միջոցով կարելի յե կրո-
վել վոչխարների քու հիմանդության դեմ փոքր
վոչխարաբուծական (մինչել 100-150 վոչխար
ունեցող) կոլխոզներում այլև մեջ կոլխոզներում
ձմեռ ժամանակ:

ԲՈՒԺՄԱՆ ՀԱԶԱՐԴԻԹՅՈՒՆԸ ԿԱԽՎԱԾ Ե
ԲԱՑԱՌԱՊԵՍ ԱՅՆ ԲԱՆԻՑ, ԹԵ ԲՈՒԺՈՂԸ ՎՈՇ-
ՐԱՆ ՃԻՇՏ ՅԵՎ ՊԱՐՏԱՀԱՆԱԶ ԿԵՐՊՈՎ Ե ԿԱ-
ՏԱՐՈՒՄ ԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

Վոչխարների քուի բուժման մյուս յեղանակը,
այն ե նբանց լուծույթների մեջ լողացնելը, կա-
տարմում ե հետևյալ, կերպ. ձմուն ընթացքում
քուով հիմանդ վոչխարները բուժվում են վերե-
լում նկարագրված յեղանակով, վորը, մեծ թը-
գով վոչխարներ ունենալու դեպքում, յեթե լիո-
վին չի բուժում նրանց, առաջ գեթ կամեցնում ե
քուի տարածումը և մասամբ բարելավում ե հի-
մանդ վոչխարների գըությունը: Գարնանը վոչ-
խարներին լողացնում են խուզելուց 12-15 որ հե-
տո (յերբ արգելն լավացել են մկրատից կաշվի
վրա առաջացած վերքերը), իսկ աշնանը՝ մինչ
ցըտերի սկսելը: Այդ նպատակով վարախի մոռ
կառուցվում ե փայտյա (շատ ավելի լավ ե ցե-
մենույա) լողարան (վանա), վորը մի ակա (80-90
սանտ.), բարեկամանաչափ խոր (1 և կես մետր)
և յերկար (12-15 մետր) փայտյա կամ ցե-
մենույա արկել ե՝ գեսնի մեջ թաղված, վոր, մի
կողմից ունի ուղղահայաց մուտք, իսկ մյօւս կող-
մից թեք, աստիճանավոր յելք: Ավազանի մուտքի
կողմից հասակին տրվում ե մի փոքր թեքու-
թյուն՝ ուղղված ավազանի կողմը, ուր նորից հետ
և լուսում վոչխարների կողմից դուրս տարմած հե-

զուկը : Արդ փոքր հրապարակի վրա տեղափոխում
են ավաղանից դուրս յեկած վոչխարները, վորոնել
նրանք քամվում են կամ նրանց մղում են ձեռքե-
րով, վորից հետո արլին վոչխարներն անցնում
են փարախ կամ վորեև այլ շենք, չորանալու հա-
մար :

Բացի այդ հարմարություններից, ալվազանի
մոտ կառուցվում ե ոչախ, կամ ուղակի հողի մէջ
թաղվում ե 90 գույից փոք պակաս տարողու-
թյամբ կաթսա (մեկի փոխարեն կարելի յէ վերց-
նել ավելի փոքը մէծություն ունեցող 2-3 կաթ-
սա), ջուր տաքացնելու կամ ծխախոտ յիմիելու հա-
մար : Այդ կաթսայից տաքացած ջուրը փայտե կի-
սափողովակի միջոցով լցվում ե մի մէծ տակառի
մէջ, վորտեղ նրա հետ խանումը են խոշոր քանա-
կությամբ հակառաօյին դեղ (կրնողին, լիզոլ,
ու կարբալյան թթվուա, զաված կարբալյան
թթվուա և այլն), վորտեղից արդեն պատրաստի
լուծույթը տեղափոխում են ավազան : Այդ անել
անհրաժեշտ ե, վորտեղի լուծույթը լավ խառ-
նըլած լինի և դեղը չնսափ հատակին :

Այս չենքը (վարախ) վարտել պահում են վոշիարներին լողանալուց հետ չորբանալու համար, պետք է բաժանված լինի մի քանի (4-8) բաժանմունքների: Առաջին բաժանմունքում ընկույնում են մզվելու համար ավագանից հենց նոր դուրս յեկան վոշաբներին, վորոնց վրայից հօսում և հեղուկը:

այդ ամենակեզրուս բաժանմունքն եւ, ինչու և այն-
ակը (ինչպես նաև մյուս յերեք-շրու բաժան-
մունքներում) ըստ հնարավագրին պետք է շատ ցա-
մաք փուլ: Հենց վոր այս բաժանմունքը լցվում է
վոչխարներով, վորոնք արդեն բավարկան չորսացի
են, նրանց քշում են մյուս բաժանմունքը, իսկ
դրանց տեղը բերում են ավաղանից նոր զուրու յե-
կած վոչխարներին, և այսպիսով վոչխարները չո-
րանալով՝ հաջորդաբար քշվում են բաժանմունք-
ներից բաժանմունք, մինչև վոր վերջինում, ամե-
նաշոր բաժանմունքում նրանք մնում են, նո-
յած յեղանակին՝ 24-48 ժամ:

Անհրաժեշտ և լավ է իշել, վոր այն չենքը,
վորտեղ չորանում են վոչխարները, պետք և լինի
լավ ողափոխվող, քանի վոր գոլորշիցած բուժի?
Հեղուկը միանդամայն վտանգավոր կերպով և ներ-
գործում վոչխարների վրա, և մաքուր ողի բացա-
կայության դեպքում նրանք կարող են խեղդվել:
Այդ բանից խուսափելու համար պետք է մի կողմի
վրա (պետք և զգուշանալ միջանցիկ քամուց, քա-
նի վոր խոնավ, տաքացած վոչխարները չառ-
դյուրությամբ կարող են մրսել) բաց անել բոլոր
դրաները և լուսամուտները, և հետեւել, վոր վոչ-
խարները փարախի մի անկյունում չկուտակվեն,
վորովհետեւ նման դեպքում կարող ե առաջնաւ
վատ ողափոխված տարածություն, վորի հետե-
ղանքով վոչխարները կարող են սատկել: Թույլ

և այլ հիվանդությամբ տառապող վոչխարներին պետք է լողացնելուց հետո առանձին պահել, վորապեսդի մյուս, տռողջ վոչխարները նրանց չէրգրին:

ՀԱԿԱՔՈՍԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՐԱԿԱՑՄՈՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Վոչխարներին լողացնելու պրոցեսում հակայան նշանակություն ունի հակաքոսային լուծություների ճիշտ պատրաստելը՝ այսպիս, չափազանց թույլ լուծույթը կարող է չսպանել քոսի տիղերին, և ընդհակառակը, չափազանց ուժեղ թունել լուծույթը պատճառ կղառնա վոչխարների մուսայական թունավորմանը և սպատիկուն:

Վոչխարներին լողացնելու համար սովորաբար ուրծ են ածում կրեոլինի, լիզոլի, կամ կարբույան լուծույթներ և վերջապես լողացնում են նաև ծխախոտի լուծույթի մեջ:

Այդ բոլոր լուծույթները (բացի ծխախոտի լուծույթից) պատրաստում են հետեւյալ կերպ՝ 90 գումար վոչ սպական տարողությամբ կաթսայի (կամ մի քանի ավելի փոքր չափի կաթսաների) մեջ ջուրը տաքացնում են մինչեւ 40 աստ. ըստ ծերիի, վորից հետո տաք ջուրը լցնում են մի մեծ տակառի մեջ, վորի մեջ շարունակաբար խառնելով, ալիևլացնում են վերելվում մեր հիշած հակաբռային միջոցներից մեկը՝ լողացնելու համար

սովորաբար գործադրվում ե 2,5-2,7 տոկոս կրես լինի լուծույթ (յուրաքանչյուր գույլ՝ 12 լիտր տաք ջրին՝ վերցվում ե 300-330 գրամ կրեոլին): Էլզուլ, ինչպես նա սե կարբույան թթվուտ գործադրելու դեպքում, պետք ե միերցնել 2 տոկոսային լուծույթը: Տակառում պատրաստված լուծույթը լրցվում է ավագանի մեջ, վորի մեջ և լողացնում են վոչխարներին: Գետք և լողացնել Ցերելի 30-35 աստ. վոչ սպական ջերմություն ունեցող լուծույթում: Զերծաչափի բացակայության դեպքում լուծույթի ջերմությունը կարելի յև չափել՝ ձեռքը լուծույթի մեջ կոխելով. լուծույթը պետք է այնքան տաք լինի, վոր կարելի լինի ձեռքը տպատ պահել, առանց այրելու այն: Վոչխարներին լողացնելու ժամանակ սպականի ջերմությունը միենույն աստիճնի վրա պահպանելու համար, անհրաժեշտ ե շարունակ ավագանի մեջ տաք լուծույթը ավելացնել:

Ծխախոտի լուծույթը պատրաստվում ե հետեւյալ կերպ՝ յուրաքանչյուր գույլ ջրին վերցված կում և 300-400 գր. տերեվավոր ծխախոտ և 100-200 գր. ծխախոտի փոշի, 3-4 անդամ ավելի քանակությամբ և 400 գր. խոտի մոխիր կամ որոտաշ: Այդ բոլորը զետեղվում ե կաթսայի մեջ և յետացվում ե 8 ժամ, ծխախոտի փոշու համար քամական ե 2 ժամ, վորից հետո վորջ խառնուրով լցվում է տակառի մեջ, վորտեղ նա մնում ե 14-16 լուսաւում:

ժամ, ապա այդ ստացված թունդ հեղուկը լցվում է վաննայի մեջ, խառնելով նրա հետ այնքան տաք թուր, մինչեւ վոր ստացվի վորոշված թնդության լուծույթ (լուծությների ստուգման կարգի մասին կիսունք ներբեկում):

Մաքուր, չեղադատված լուծույթ ստանալու
համար հանձնարարվում և ծխախոտի փոշին լրջ-
նել տոպրակների մեջ ամեն մեկում 2-2 ու կես
կելուքամ և այդ դրությամբ յեփել կաթսայում։
Շատ լավ են ներգործում ծխախոտային—կարբո-
լյան կամ ծխախոտային կրեոլինյան խոռոք վան-
նաները, վորի դեղպում յուրաքանչյուր գույլ ջրին
վերցվում ե վերեկվում հիշված քանակությամբ տե-
րեվավոր ծխախոտ, ծխախոտի փոշի, խոռոքային
մոխիր և բացի գրանից 100 գր. կարբոլյան թթվ-
պուտ կամ կրեոլին։ Ծխախոտի փոշի դորձածելու
դեպքում հատուկ ուշագրություն պետք դարձ-
նել նրա վորակի վրա։ Ծխախոտի փոշին վոչ մի
դեպքում չպետք ե լինի խոնալ, նեխած կամ
բորբոսնած։ Գործածության համար պիտանի յե-
միայն այնպիսի ծխախոտային փոշին, վորի փո-
շու մեծագույն մասը (80 տոկոսից ավելին) ծխա-
խոտի տերեկներից ե, այլ վոչ թե ցողուններից։
քանի վոր ցողունների մեջ նիկոտինի քանակը
չառ աննշան է։

Նմանապես անհրաժեշտ է սպառել նաև կրեպ-
մինի, մեզովի և ու կարբույսի թթվուտի վզրակը,

բանի վոր այդ գեղարայքը բաց են թողնվում վոչ
միանման վորակով և հաճախ չեն լուծվում ջրի
մեջ։ Լավ վորակի կրիոլինը ջրի հետ խառնելու
դեպքում նույնիսկ որեր անցնելուց հետո նըստ-
վածք չի տա և ջրի յերեսին յուղի շերտ չի կազ-
մի։

Յեթե կրեոլինը ջրի մեջ չի լուծվում, նշանակում է նա անպետք և, քանի վար նման կրեոլինը հնատի հաստակին և տիղերի վրա չի ներդրծի. կամ թե կլողա ջրի յերեսին, վորի գեպքում սկզբում լողացով վոչխարներն իրենց բրդի վրա հճախաքին վողջ կրեոլինը և կիթունավորվեն, իսկ մյուս ները՝ կլողանան առանց կրեոլինի մաքուր ջրում և չեն բռնժիր:

Վերջին ժամանակներու մեծ չափով պարծա-
դբում են ծծմբակացին և ծծմբանատրիոնային
վաճանաները, քանի վոր չանդրած կիր և կծո-
նատրիոն (կառաստիկական սողա) ձեռք բերելու
ավելի հեշտ է, քան կրեոլին, լիդու կամ կարո-
լան թթվուտ :

Ծծմբա-կրպային լուծութիւն հետեւյալ կերպ են
սպատառութ 12,5 կիլոդրամ փոշիամիկ ծծութ-
բը կամ լավ ծեծված ձողամեն ծծութբը և 7,5
կիլոդրամ չափոցքած կիրը կամ 10 կիլոդրամ
հենց նոր հանդցքած կիրը խնամքով խառնում են
12-20 լիտր ջրէ հետո Այնուհետև ավելացնում են
125-150 լիտր (10-12 դույլ) ջուր և այդ բոլորը
յեփում են 30-40 րոպէ: Ենուազներուց հետո թաղ-

նուժ են, վոր հեղուկը պարզվի, վորից հետո վերին պարզ շերտը լցվում է ամաղանի մեջ, վորտեղ ամելացնում են այնքան ջուր, վոր ստացվի 350-500 լիտր (30-40 դույլ) լուծույթ:

Հեղուկի փոխարեն կարելի յե գործածել կծու նատրիոն այս ձևով՝ 10 կիլոգրամ ծծումբը (փոշաճեվ կամ կոչածեվ, բայց լավ ծեծված) յավ խառնում են 12,5 կիլոլիտր (1 դույլ) ջրի հետ և դրանից հետո ամելացնում են 2,5 կիլոգրամ կծու նատրիոն (կառուստիկական սոլա): Այս խառնուրդը շատ ուժեղ տաքանում է (անհրաժեշտ է հետեւ վել, վորակեղի շիթերից չցատկեն աչքի մեջ) ծըծըմբի և կծու նատրիոնի միջև առաջացած քիմիական ռեակցիայի շնորհիվ: 40 րոպիկ հետո յերբ քիմիական ռեակցիան դադարում է, ամելացնում են այնքան ջուր, վոր ստացվի 500 լիտր (40 դույլ) լուծույթ: Այս վերջին յեղանակը հարմար է այն տեսակետից, վոր տաքացնելու կարիք չի լինում (ինքը հեղուկն ուժեղ տաքանում է), հետեւվարար ավելորդ և նաև կաթսոն:

Վոչխարներին թունավորելուց խուսափելու համար, նախ քան նրանց լողացնելը, անհրաժեշտ է ամեն անդմա ստուգել լուծույթի թնդությունը: Այդ նպատակով պստրաստված լուծույթի մեջ լողացնում են 10 դույլ վոչխար (վոչ պակաս) և սպասում են մի վորոշ ժամանակ (2-3 ժամ), հետեւկելով լողացող վոչխարներին:

Թույլ և համարվում այն լուծույթը, յերբ ավաղնից վուրպ յեկած վոչխարների վրա չի նկատվում լուծույթի աղղեցությունը. այդպիսի լուծույթը կարող է չոչնչացնել քոսի տիզերին: Զափազանց ուժեղ և համարվում այն լուծույթը, յերբ լողացնելուց հետո վոչխարներն ընկնում են ընկճված գրության մեջ, բերաններից փրփուր և փազում, զողում են, յերերալով են քայլում, փսխում են և այլն: Յեվ, վերջապես նորմալ և համարվում այն լուծույթը, յերբ, չնայած վոչխարները վաննայից դուրս են դալիս թուրացած, ընկճված, սակայն թունավորման վերահսյալ հատկանիշները չեն նկատվում: Լողացնելու վողջ ընթացքում պետք է հատեվել, վորպեսի լուծույթի թնդությունը չվննի:

ՎՈՉԽԱՐՆԵՐԻՆ ԼՈՂԱՑՆԵԼԻ.

Վոչխարներին լողացնում են հետեւյալ յեղանակով՝ խուզելուց 12-15 օր հետո, (յերբ մկրատից առաջացած վերքերն արդեն լավացել են), իսկ աշնանը մինչեւ յրտերն սկսվելը, բուրք վոչխարներն ամենայն ուշադրությամբ զընփում են, վորի ժամանակ հայտարերված վարակված տեղերը լվացվում են կանաչ սապոնի կամ թունդ մոխրաջրի տաք լուծույթով և տրորութ ձեռքով այնքան, մինչեւ վոր խոցերը և կեղտերը բուրպին կմաքրվեն, վորից հետո արդեն քում

են հակաքառսային հեկուղ ոծանելիքը, (վարի
պատրաստելու յեղանակը նկարտգրված և բուժե-
լու առաջին յեղանակի մեջ) կամ սրոկում են
կրեուլնի 5 տոկոսային լուծույթ, իսկ կրեուլն
չլինելու դեպքում կարելի յե գործադրել սկիզբ-
դար: Այս բանից 2-3 որ հետո միայն սկսում են
լողացնել:

Գետք ե լողացնել կոլտնտեսության բոլոր
վոչխարներին, թե հիվանդներին և թե առող-
ներին՝ թե մետիս, թե մերինոս, և թե տեղական
վոչխարներին:

Զնայած տեղական վոչխարները հաղվագյուտ
դեղողերում են հիվանդանում քոսով, բայց նրանք
շփման մեջ լինելով հիվանդ վոչխարների հետ,
կարող են իրենց բրդի վրա քոսի տպեր ունենալ.
այդ պատճառով նրանց ևս պետք ե լողացնել:
Գառնիքին պետք ե լողացնել մեծերից առանձին:
Յեթե կոլտնտեսությունում կան առողջ և հի-
վանդ վոչխարներ, ապա այդ դեպքում պետք ե
լողացնել նախ առողջներին, հետո միայն հի-
վանդներին:

Թութավորումից խռափելու համար ավելի
լավ ե իիստ հյուծված և ուրիշ հիվանդությամբ
առառապղ վոչխարներին բոլորովին առանձնաց-
նել լողացվող վոչխարներից և բուժել նրանց ա-
ռանձին յեղանակով, այսինքն՝ հակըսային ո-
ծաելիքներով: Այս վոչխարներին, մինչեվ կա-

տարելավես բուժվելը, չի կարելի խառնել լնդ-
հանուր հոտին, քանի վոր նրանք նորից կարող
են տարածվել քոս հիվանդությունը: Գոսի տա-
րածումից խռափելու համար պետք ե լողացնել
նաև վոչխարների հոտում գտնվող բուրոր չներին
և այծերին:

Վոչխարներին պետք ե լողացնել տաք, քամի
չեղած ժամանակ, քանի վոր նրանք լողացնելուց
հետո, դյուրությամբ կարող են մրսել: Լողաց-
նելուց առաջ նրանց պետք ե ջրել, (վորպեսզի
լուծույթ չիմեն), բայց չպետք ե կերակրել, քա-
նի վոր նրանք դատարկ ստամոքսով ավելի հեշ-
տությամբ են դիմանում լողանալուն:

Վոչխարներին նախապես քշում ավազանին
մոտ մի աղալի մեջ, ապա ավազանի մեջ են լրց-
նում պատրաստի լուծույթը (նախապես ստուգե-
լով նրա թնդության աստիճանը). այնուհետեւ
մի մարդ բանում և վոչխարներին և տալիս մյուս
յերկուսին, վորոնք կանգնած են ավազանի մոտ,
որանք վոչխարներին զգուշությամբ խորասուզում
են լուծույթի մեջ, հետեւվելով, վոր վոչխարները
չնշանառ չենեն:

Ընկնելով ավազանի մեջ, վոչխարները լո-
ղում են յեղք ուղղությամբ, վորի ժամանակ
ավազանի կողքերին կանգնած մարդիկ հատուկ
ձողերով հետեւում են, վորպեսզի վոչխարի մեջ-

բը և գլուխը բավ ծծվեն լուծույթով։ դրա համար նրանք ձողերով 2-3 անգամ վոչխարներին բրդում-սուղում են ավազանի խորքը։

Այդ նույն մարդեկ հետեւում են, վարպետի թուց վոչխարները չխեղովեն, վորի համար ձողերով պահում են նրանց պարանոցի տակից։ Սականում յուրաքանչյուր վոչխար մնալու յե Յոսկեից վոչ պահաս, քանի վոր ամելի կարծ ժամանակամիջոցում բուժիչ լուծիչը ներդործել չի կարող։

Ավազանից գուրս դալով, վոչխարներներն անցնում են տախտակյա կամ ցեմենտյա փոքր հրա պարակի վրա, վորտեղ կանոնած յերկու մարդեկ նրանց լալ տրուռում են խողանակներով կամ կոչո մաշալվայով։ Այդ արված ե նրա համար, վորուեազի լուծույթը թափանցի մինչեվ կաշին և ավելի լավ ներգործի քանի տիզերի վրա։ Վոչխարների գուրս հանած ամելուրդ հեղուկը թեք հատակով նորից հետ և հոսում ավազանի մեջ։

Վոչխարներին մղելուց հետո՝ քըում են հատուկ հարմարեցված, ծածկված բայց լավ հողմահարված չենքը, վորտեղ նրանք 1-2 որվա ընթացում չօրանում են։

Վոչխարները լողացնելուց հետո վոչ մի գեղազում չպետք է թողնել բաց ողում, քանի վոր նախ թաց և տաքացած վոչխարները դյուրու-

թյամբ կարող են մրսել, և հետո բուժիչ լուծույթը դեռ քոսի տիզերը չոչնչացրած՝ արեվի ճառապայյիթների տակ արագ կերպով դոլորշիանում ե։

Լողացնելու ժամանակ թունավորված վոչխարներին պետք ե դուրս բերել մաքուր ոդի մեջ, զլուխուր և մարմինը վողողել սառը մաքուր ջրով և բերանից ներս լցնել կես շիշ ջրի մեջ լուծված 25-50 դրամ պլատրերյան աղ կամ յուղի հետ խառնած 2-5 դրամ սկիալիդար։ Փորն ուռչելու գեղքում պետք է այն տրորել ծղոտի կետվի, խոկ ծայրահեղ դեպքում, պետք է ծակել թափանը (ծախ կողմից, գավակից՝ 3-4 մատ և զոտոսկրից՝ 2-3 մատ հեռավորության վրա), տրուակար կոչվող հատուկ գործիքով։

Լողացնելուց հետո, քանի գեռ վոչխարները դտնվում են փարախոնամ, վոչ մի դեպքում չպետք ե կերակրել նրանց, քանի վոր կերը նրանց վրայից հոսած լուծույթից կեղտոտվելով կարող ե թունավորել վոչխարներին։ Կերակրելու համար ամելի լավ է յերեկոյան ղեմ, (յերբ շողն անցնում ե) նրանց 1 ժամով միայն քշել արոտանեղի։ Վոչխարներին կարելի յե ջրել գուրս ուզածի չափի, քանի վոր լողանալուց հետո, նրանք ուժեղ ծարագ են դրում և այդ պատճառով մեծ ախորժակով են խմում ջուրը։

Վոչխարներին արածելու կարելի յէ տանել այն ժամանակ, յերբ նրանք բոլորովին չորացած են լինում (1-2 որ հետո), սակայն դրանից հետո յել առաջին Յ որը գիշերները չպետք ե թողնել նրանց դուրսը. այլ պետք ե քշել փարախի:

8-10 որ հետո, պետք ե նորից լողացնել ճիշտ նույն յեղանակով: Քոս հիվանդությամբ ուժեղ կերպով վարակված վոչխարները լողացվում են նաև յերրորդ անգամ (նույնպես յերկրորդ անգամ լողացնելուց 8-10 որ հետո):

Լողացնելու հետ միաժամանակ անհրաժեշտ ե ամենայն խնամքով ախտահանել վարախսը, հիվանդ վոչխարների հետ շիման մեջ յեղած առարկաները և ինսամվորների հաղուստները:

Ախտահանման յեղանակի մասին՝ մենք խոսել ենք վոչխարների քոսը բուժելու առաջին յեղանակի մեջ:

Վոչխարների քոս հիվանդության դեմ պայքարելու գործում վոչ պակաս կարեվոր նշանակություն ունի արոտատեղերի փոփոխությունը: Վարակված արոտատեղերում յեթե նրանց վրա վոչխարներ չեն արտծում, քոսի տիզերը վոչընչանում են 2-3 ամսից հետո. այդ պատճառով, լողացնելուց հետո, վոչխարներին պետք ե արածացնել չվարակված արոտատեղերում; Վարակված արոտատեղերը տվյալ տարին պետք ե ուղա-

տառակործել վորպես խստահարգներ, իսկ վորպես արոտատեղիներ կարող են ծառայել հաճորդ գարնանը (ծայրահեղ դեպվում, նույն տարին, բայց 3-4 ամսից հետո): Հաճախ պատահում ե, վոր վոչխարներին հաջող լողացնում են և ինսամվով ախտահանդաւ շենքը, բայց վորովհետև նրանց արածացնում են վարակված արոտատեղերում, այդ պատճառով քոս հիվանդությունը նորից յերեխան ե գալիս:

Լողացնելը վոչ միայն առողջացնում ե, այլ և վոչխարներին պաշտպանում ե քոս հիվանդությունից, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր կորոնտեսություն ամեն տարի դարնանը և աշնանը լողացնելու յէ վոչխարներին: Լողացնելու վրա կասարվելիք ծախսերը միանգամայն աննշան են այն վասների համեմատությամբ, վոր կարող ե կըել կոլտտեսությունը քոս հիվանդության ժամանակի:

Ինչ վերաբերում ե վոչխարների քոս հիվանդությունը դազուկամերային յեղանակով բուժելուն, ապա, քանի վոր այդ կատարում ե միայն անասնաբուժը, այդ պատճառով ել նրա նկարագրության վրա այստեղ կանգ չենք առնում:

Ցեղափակակման մեջ պետք ե ասենք, վոր հընաբավոր կլինի վոչխարների քոս հիվանդության դեմ հաջող կովել միայն այն ժամանակ, յերբ

յուրաքանչյուր կալտնանսության ամենայն պարտաճանաշությամբ կկատարի մեր կողմից առաջադրված բոլոր պահանջները, այլապես կդժվարացնա քոսի գեմ տարվող պայքարը և բուժման վրա ծախսված բոլոր միջները չեն հասնի իրենց նպատակները:

Վոչխարների քոս հիմանդրության բուժումը կատարվելու յի անասնաբուժի կամ անասնաբուժակի հսկողությամբ, — բայց քանի վոր նըրանք մշտապես կոլտնտեսություններում լինել չեն կարող, այդ պատճառով նրանց կարող են փոխարինել մենք կամ յերկու փորձառու, յեռանդուն հովիվ, փորոնց անասնաբուժը կամ անասնաբուժակը պետք ե սովորեցնի վոչխարների քոսը բուժելու և քոսից պաշտպանելու բոլոր կանոնները:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱ- ՌՈՒՄՆԵՐԸ ՎՈՇԽԱՐՆԵՐԻՆ ԽՈՒՁԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Խուզելու ժամանակ անհարժեշտ ե ամենայն խնամքով զննել վոչխարներին, առանձնացնել հիվաղներին հետազոտ բուժման համար, կարել կճշգները և յեղյուրները, մկրատից առաջացած վերքերին քսել յոդ, մաքուր կրեոլին կամ վորեն ուրիշ ախտահանիչ նյութ: Քոսով վարակված բոլոր տեղերն անհարժեշտ ե լվանալ տաք:

Հրով, գործածելով կանաչ սապոն կամ մոխրան ջուր, վերացնել բոլոր խոցերը և կաշվի չորացած մասերը, վորից հետո այդ վարակված տեղերը սրսկել կրեոլինի կամ սկիալիդարի օտոկոսային լուծույթ:

Խուզելուց առաջ մկրատները պարտադիր կերպով պետք ե ախտահանել 2-3 ժամ կարբույան թթվուտի 3-5 տոկոսային կամ կրեոլինի 5 տոկոսային լուծույթի մեջ պահելով: Խուզելու ժամանակ քոս հիմանդրությունը տարածվելուց իուստաիկու համար, անգայման արգելվում ե ըսկըզբում խուզել քոսով հիմանդ վոչխարներին և հետո միայն առողջներին: Սակայն նման սխալ թույլ տալու գեպքում, պարդիր կերպով պետք ե մկրատները ախտահանել (մերեւում հիշված յեղանակով), ապա նույն ախտահանիչ լուծույթներով, պետք ե լվանալ ձեռքերն ու հազուստը և հետո միայն անցնել առողջ վոչխարների խուզելուն: Յեթի անտեսության մեջ կան վոչխարի առողջ և վարակված հոտեր, ապա այդ գեպքում նախապես պետք ե խուզել առողջ և ապա միայն հիմանդ վոչխարներին:

Խուզելուց 10-12 որ հետո, (յերբ մկրատի անդեմը կլալանան) այն հոտերում, վարտեղ քոս կար, բոլոր վոչխարներին 2-3 տոկոմ (8-10 որ վարտմիջումներով) լողացնում են կրեոլինի վարտմիջումներով:

2,5 — 2,7 տոկոսային լուծույթի կամ կարբովյան
թթվուտի 25 տոկոսային լուծույթի մեջ կամ մեկ
ուրիշ լուծույթի մեջ անառնաբուժի ցուցմունք-
ներով:

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԿԵՆՏՐՈՆ

9057